ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 18-Ի N 16 ԱՐՁԱՆԱԳՐԱՅԻՆ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐԱՅԻՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

h/h	Առարկության, առաջարկության հեղինակը, Գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
	1	2	3	4
1	Հայաստանի Հանրապետության միջազգային տնտեսական	Դիտողություններ և առաջարկություններ չկան:		

	ինտեգրման և բարեփոխումների նախարարությունն 2015-04-10 06/06.7/5868-15			
2	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունն 2015-04-14 1/06.1/4353-15	Դիտողություններ և առաջարկություններ չկան:		
3	Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությունն	Դիտողություններ և առաջարկություններ չկան:		

	2015-04-15 01/16.1/4231-15			
4	Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն 2015-04-17 1111/3562-15	Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության մշակման և իրականացման առանձնահատկությունները՝ գտնում ենք, որ ՀՀ արտաքին գործերի նախարարությունում նախագծով առաջարկվող խորհրդի ստեղծումը նպատակահարմար չէ: Ուստի առաջարկում ենք նախագծում նախատեսել բացառություն ՀՀ ԱԳՆ համար:	Չի ընդունվել: Հստակ հիմնավորված չէ, թե ինչ նկատառումներից ելնելով է նախատեսվում բացառություն անել ՀՀ արտաքին գործերի նախարարության համար: Միաժամանակ, հաշվի առնելով ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից իրականացվող գործառույթները և դրանց բնույթը, կարծում ենք հիմնավոր չէ նման բացառության նախատեսումը:	Նախագծում փոփոխություն չի կատարվել:
5	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն 2015-04-15 ԱՄ/11.1/4237-15	1. Նախագծի 1-ին կետի 2-րդ պարբերության մեջ նշվում է, որ հանրային խորհուրդը ստեղծվում է Նախարարության առջև դրված խնդիրներն ու գործառույթներն արդյունավետ և թափանցիկ իրականացնելու նպատակով: Այս կապակցությամբ հայտնում եմ, որ խորհրդակցական մարմնի գործունեության նպատակը չի կարող լինել նախարարության առջև դրված խնդիրների ու գործառույթների	Ընդունվել է:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

		արդյունավետ իրականացումը, նկատի ունենալով, որ այն, ըստ էության, հենց նախարարության գործունեության նպատակն է: Հանրային խորհրդի գործունեության նպատակը կարող է լինել Նախարարության առջև դրված խնդիրների և գործառույթների իրականացման ընթացքում քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովումը և աջակցության ցուցաբերումը: Ուստի, առաջարկվում է սույն դրույթը խմբագրել՝ փոփոխելով հանրային խորհրդի ստեղծման նպատակը:		
		2. Առաջարկում եմ խմբագրել Նախագծի 1-ին կետի 3)-րդ ենթակետը, սահմանելով, որ հանրային խորհուրդը ոչ թե մասնակցում է իրավական ակտերի և հայեցակարգերի մշակման աշխատանքներին, այլ վերջիններիս վերաբերյալ կարծիք է ներկայացնում: Ավելին, անհրաժեշտ է հստակեցնել նաև այն հանգամանքը, որ հանրային խորհուրդը կարծիք է ներկայացնում ոչ թե Նախարարության կողմից շրջանառվող բոլոր իրավական ակտերի և հայեցակարգերի վերաբերյալ, այլ միայն այն իրավական	Ընդունվել է մասնակի:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

		ակտերի վերաբերյալ, որոնք տվյալ ոլորտի առավել կարևոր և նշանակալից հարաբերություններն են կարգավորում:		
		3. Նախագծի 1-ին կետի 5)-րդ ենթակետի համաձայն՝ հանրային խորհուրդը ներկայացնում է առաջարկություններ և դիտողություններ Նախարարության ընթացիկ գործունեության, Նախարարության առանձնացված ստորաբաժանումների կողմից մատուցվող ծառայությունների որակի վերաբերյալ: Այս կապակցությամբ հայտնում եմ, որ Նախարարության առանձնացված ստորաբաժանումներ են համարվում գործակալություններն ու տեսչությունները: Սակայն տեսչությունները ծառայություններ չեն մատուցում, վերջիններս իրականացնում են վերահսկողական գործառույթներ և կիրառում պատասխանատվության միջոցներ: Ուստի անհրաժեշտ է սույն դրույթը խմբագրել:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		4. ա) Նախագծի հավելվածի 2-րդ կետը սահմանում է, որ Խորհրդի նախագահը Հայաստանի Հանրապետության նախարարն է: Նկատի ունենալով, որ հանրային խորհուրդը նախարարին կից խորհրդակցական մարմին է,	ա) Չի ընունվել Հանրային խորհուրդը ստեղծվում է, որպես նախարարին կից խորհրդակցական մարմին և այն, որ նախարարը խորհրդի	Նախագծում փոփոխություն չի կատարվել:

		հիմնավորված չէ, որ նախարարին կից խորհրդի նախագահի պաշտոնը զբաղեցնի նախարարը: Ավելին խորհրդի առավել անկախ, անկաշկանդ աշխատանքի ապահովման նպատակով խորհրդի նախագահ պետք է լինի նախարարությունում որևէ պաշտոն չզբաղեցնող, այլ հենց հանրային խորհրդի կազմից ընտրված անդամը: բ) Սույն առաջարկության ընդունման դեպքում անհրաժեշտ կլինի փոփոխել նաև Նախագծի հավելվածի 13-րդ կետը: Ավելին, 13-րդ կետի կապակցությամբ հայտնում եմ, որ ՀՀ նախարարի տեղակալի՝ հանրային խորհրդի նիստի նախագահման ու վարման իրավասությամբ օժտելը հիմնավորված չէ, քանի որ նախարարի տեղակալը որևէ մասնակցություն չունի խորհրդի աշխատանքներին, ուստի առաջարկում եմ հանրային խորհրդի նախագահի տեղակալին ընտրել խորհրդի կազմից:	նախագահն է և ղեկավարում է խորհրդի աշխատանքը իրավաչափ և տրամաբանական է: Իսկ ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ նախարարը հանդես է գալու հանրային խորհրդի նախագահի պաշտոնում, ապա նշենք, որ այդ հանգամանքը չի խոչընդոտի խորհրդի գործունեության անկողմնակալությանը: բ) Ընդունվել է մասնակի:	Նախագծի 13-րդ կետում կատարվել է հետևյալ փոփոխությունը. «13. Խորհրդի նիստերը նախագահում և վարում է Խորհրդի նախագահը կամ նրա կողմից լիազորված անձը»:
		5.Անհրաժեշտ է խմբագրել Նախագծի հավելվածի 9-րդ կետը, քանի որ Նախագծի հավելվածի 5-րդ և 8-րդ կետերը պահանջներ	Չի ընդունվել: Նախագծի հավելվածի 5-րդ կետում նշվում է, թե դիմումի հետ	Նախագծում փոփոխություն չի կատարվել:

		չեն սահմանում: Նշված կետերում նշվում է դիմում ներկայացնելու մասին:	ներկայացվող հիմնավորման մեջ ինչ պետք է նշվի, ինչն էլ իր հերթին հանդիսանում է որպես սահմանվող պահանջների պահպանում:	
		6. Նախագծի հավելվածի 15-րդ կետը հստակեցման և պարզաբանման կարիք ունի: Մասնավորապես՝ անհրաժեշտ է հստակեցնել, որոնք են համարվում դռնբաց, որոնք՝ դռնփակ նիստեր, ինչով է պայմանավորված դռնփակ նիստի անցկացումը, որ դեպքում են դռնփակ նիստերն անցկացվում Խորհրդի նախագահի նախաձեռնությամբ կամ Խորհրդի անդամների կեսից ավելիի համաձայնությամբ:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է փոփոխություն՝ հանվել է դռնփակ անցկացնելու մասին դրույթը:
		7. Նախագծի հավելվածի Բաժին VII-ում առաջարկում եմ ավելացնել այն հիմքերը, որոնց առկայության դեպքում Հայաստանի Հանրապետության նախարարի հրամանով՝ Խորհրդի անդամների կեսից ավելիի համաձայնության դեպքում, Խորհրդի անդամի լիազորությունները կարող են դադարեցվել:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: Նախագծում նախատեսվել է խորհրդի անդամի լիազորությունները դադարեցնելու հիմքը:

6	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն 2015-04-15 ԱԱ/ԼՆ/3145-15	1. Նախագծի 3-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերը «Նախարարության» բառից առաջ լրացնել «համապատասխան» բառով.	Չի ընդունվել: «Նախարարություն» բառից առաջ «համապատասխան» բառը ավելացնելը հիմնավորված չէ: Բացի այդ, Նախագիծը վերաբերում է բոլոր նախարարություններին:	Նախագծում փոփոխություն չի կատարվել:
		2. Նախագծի հավելվածի V. բաժնում նշել նաև հանրային խորհրդի նպատակը:	Չի ընդունվել: Նախագծի հավելվածի V բաժինը այլ հարցեր է կարգավորում: Իսկ հանրային խորհրդի նպատակը սահմանված է Նախագծի 1-ին կետով լրացվող՝ 15.2-րդ կետով:	Նախագծում փոփոխություն չի կատարվել:
7	Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն 2015-04-20	1. Նախագծի ընդունման անհրաժեշտությունը ենթադրաբար բխում է ՀՀ կառավարության 2014թ. հուլիսի 31-ի նիստի N32 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած Բաց կառավարման գործընկերության 2014-2016 թվականների համար ՀՀ երկրորդ գործողությունների	Ընդունվել է մասնակի:	Նախագծում նախատեսվել են նաև լրացուցիչ չափանիշներ:

	01/2845-15	ծրագրի պարտավորությունների 2-րդ բաժնի 7-րդ կետից, որի հիմնական նպատակներից մեկը խորհուրդների կազմում ընդգրկվելիք ՔՀԿ-ների ներկայացուցչականության և մասնագիտական որակավորման չափորոշիչների սահմանումն է: Մինչդեռ, նախագիծը ընտրության որևէ հստակ չափորոշիչ կամ պահանջ չի սահմանում: Նախագծի 5-րդ կետով ընդամենը սահմանվում է դիմումի հետ համապատասխան հիմնավորում ներկայացնելու պահանջը, ինչը բավարար օբյեկտիվություն չի կարող ապահովել: Ավելին, 9-րդ կետը նախատեսում է դիմումի մերժման հնարավորությունը, սակայն գործնականում դա ևս չի կարգավորված, քանի որ չկան սահմանված չափորոշիչներ: Կարծում ենք, որ խորհուրդների կայացման և գործունեության արդյունավետության տեսանկյունից նշվածը առանցքային նշանակություն ունի: Հակառակ դեպքում դրանք կարող են պարզապես ձևական բնույթ կրել և ռեսուրսների չհիմնավորված օգտագործման պատճառ դառնալ:		

		2. Առաջարկում ենք աշխատակարգում նախատեսել նաև այն դեպքը, երբ չի ապահովվում խորհրդի ձևավորման համար անհրաժեշտ դիմումների քանակը կամ ներկայացված դիմումները չեն համապատասխանում սահմանված պահանջներին՝ հաշվի առնելով, որ նախագծի 3-րդ կետով ամրագրված է խորհրդի կազմի նվազագույն (20 անդամ) թվաքանակ:	Չի ընդունվել: Խորհուրդը չի կարող ձևավորվել այն դեպքում, երբ շահագրգիռ անձանց նվազագույն թվաքանակը ապահովված չէ, իսկ հաշվի առնելով քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցությունը՝ կարծում ենք, պրակտիկայում նման խնդիր չի առաջանա:	Նախագծում փոփոխություն չի կատարվել:
		3. 5-րդ կետում առաջարկում ենք հստակեցնել հայտարարության հրապարակման ձևը և վայրը՝ թերևս սահմանելով հայտարարության՝ նախարարության պաշտոնական կայքում տեղադրելու պահանջը:	Ընդունվել է:	Նախագծի հավելվածի 5-րդ կետի «հայտարարության» բառից առաջ ավելացվել է «Նախարարության պաշտոնական ինտերնետային կայքէջում հրապարակված» բառերը:

		4. Հավելվածի 6-րդ կետով սահմանված է, որ Խորհրդի անդամներն ընդգրկվում են խորհրդի կազմում երկու տարի ժամկետով, իսկ 7-րդ կետով սահմանված է, որ երկու տարին մեկ անգամ խորհրդի անդամների մեկ երրորդը ենթարկվում է ռոտացիայի: Փաստորեն, խորհրդի երկու երրորդի համար 6-րդ կետի պայմանը չի կիրառվում: Ընդ որում, երևույթի ճիշտ բովանդակությունը չի հաղորդվում «ռոտացիա» հասկացությամբ: Առաջարկում ենք նախատեսել նաև Խորհրդի անդամների վերընտրման վերաբերյալ դրույթներ՝ միաժամանակ հստակեցնելով 7-րդ կետով սահմանված Խորհրդի անդամների ռոտացիայի ենթարկման կարգը և չափորոշիչները:	Չի ընդունվել: Նախագծով նախատեսված ռոտացիայի նման կարգի նախատեսումը հիմնավոր է, քանի որ կապահովվի խորհրդի գործունեությանը մասնակցող անձանց կազմի փոփոխությունը, ինչը իր հերթին կնպաստի առավել լայն թվով քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցությունը Խորհրդի աշխատանքներին: Ընդ որում դա ամբողջովին համապատասխանում է ռոտացիայի գաղափարին:	Նախագծում փոփոխություն չի կատարվել:
		5. Հավելվածի 30-րդ կետը լրացնել նոր ենթակետով՝ խորհրդի անդամի լիազորության դադարեցման հիմք նախատեսելով նաև խորհրդի կազմում ընդգրկվելու ժամկետը ավարտվելու դեպքը:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:

8	Հայաստանի Հանրապետության էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարությունն 2015-04-17 01/13/1921-15	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը /այսուհետ՝ նախարարություն/ նպատակահարմար չի գտնում նախարարությունում նախարարին կից հանրային խորհրդի ստեղծման անհրաժեշտությունը՝ հետևյալ հիմնավորմամբ. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 20.11.2008թ. նիստի 47-րդ արձանագրության 46-րդ կետով՝ նախարարության առջև դրված խնդիրների, գործառույթների արդյունավետ իրականացման նպատակով նախարարին կից ստեղծվել է կոլեգիա, որը օժանդակում է նախարարության գործունեության ռազմավարական պլանավորման, քաղաքական որոշումների կայացման, միջոցառումների ծրագրի մշակման գործընթացների իրականացման աշխատանքներին և նպաստում այդ գործընթացներում ռազմավարական ծրագրերի իրականացմանը, գնահատմանը, քաղաքացիական հասարակության մասնակցությանը: Դիցուք ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարին կից կոլեգիայի կազմում ընդգրկվել և աշխատանքներին իր մասնակցությունն է ապահովել <<Հայաստանի Կանաչների Միության>> նախագահը, որի կարծիքը անհետևանք չի թողնվել կոլեգիայի որոշումների կայացման ընթացքում: Նախարարությունը համակարծիք է հասարակական կազմակերպությունների հետ	Չի ընդունվել: Խորհրդի ստեղծման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության երկրորդ գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին» արձանագրային որոշումից, որտեղ ամրագրված է նախարարին կից հանրային խորհրդի ստեղծման անհրաժեշտությունը:	Նախագծում փոփոխություն չի կատարվել:

9	Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն 2015-04-20 02/11-1/9902-15	Գտնում ենք, որ նախարարին կից հանրային խորհրդի գործունեության կազմակերպչական-տեխնիկական աշխատանքները պետք է իրականացվեն նախարարության աշխատողների ընդհանուր թվաքանակի և պահպանման ծախսերի սահմաններում:	Ընդունվել է ի գիտություն:	Նախագծում փոփոխություն չի կատարվել:
10	Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն 2015-04-15 ՍԿ/ԱԱ-1/2302-15	1. Խմբագրել Նախագծի 1-ին կետով լրացվող 15.2-րդ կետը՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 18-ի N 16 արձանագրային որոշման մեջ լրացում կատարելու և Հայաստանի Հանրապետության նախարարին կից կոլեգիայի օրինակելի աշխատակարգին հավանություն տալու մասին» թիվ 47 արձանագրային որոշման 1-ին կետով լրացված 15.1-րդ կետի բովանդակությունը:	Չի ընդունվել: Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 18-ի N 16 արձանագրային որոշման մեջ լրացում կատարելու և Հայաստանի Հանրապետության նախարարին կից կոլեգիայի օրինակելի աշխատակարգին հավանություն տալու մասին» թիվ 47 արձանագրային որոշման 1-ին կետով լրացված 15.1-րդ կետը և Նախագծի 1-ին կետով լրացվող 15.2-րդ կետը հստակեցնում և տարանջատում են Կոլեգիաների և	Նախագծում փոփոխություն չի կատարվել:

			Խորհուրդների գործառույթները, մասնակից կողմերի կազմը, իրավունքները և պարտականությունները:	
		2. Նախագծի 2-րդ կետով նախատեսվող Հայաստանի Հանրապետության նախարարին կից հանրային խորհրդի օրինակելի աշխատակարգի (այսուհետ՝ Աշխատակարգ) 7-րդ կետում «Երկու տարին» բառերը փոխարինել «Երեք տարին» բառերով՝ նկատի ունենալով, որ Խորհրդի անդամների մեկ երրորդը ռոտացիայի կարող է ենթարկվել երեք տարին մեկ անգամ:	Չի ընդունվել: 2 տարին մեկ ռոտացիան ապահովում է խորհրդի կազմի արդյունավետ փոփոխության մեխանիզմը:	Նախագծում փոփոխություն չի կատարվել:
		3. Արձանագրության 20-րդ կետում նախատեսել համապատասխան դրույթ՝ քվեարկության արդյունքում ձայների հավասարության դեպքերի հարցի կարգավորման վերաբերյալ:	Ընդունվել է:	Նախագծի 20-րդ կետում կատարվել է հետևյալ լրացումը. «Քվեարկության արդյունքում ձայների հավասարության դեպքում վճռորոշ է նիստը նախագահողի ձայնը»:

11	Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն 2015-04-21 01/18/2037-15	1. 1-ին կետի երկրորդ նախադասության <կառավարումը> բառը փոխել <կառավարումն> բառով, 2. հավելվածի վերնագրում <խորհուրդի> բառը փոխել <խորհրդի> բառով, 3. II_րդ գլխի 4-րդ կետում <լրատվություն> բառը փոխել <լրատվական> բառով, 4. II-րդ գլխի 9-րդ կետում <մերժվում> բառից հետո ավելացնել <է> օժանդակ բայը, 5. II-րդ գլխի 13-րդ կետում <կամ> բառից առաջ դրված ստորակետը հանել, 6. VI-րդ գլխի 27-րդ կետի 3-րդ ենթակետը համապատասխանացնել II-րդ գլխի 14-րդ կետին:	Չի Ընդունվել է: Երկուսն էլ կիրառելի են: Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: Չի ընդունվել: «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով նախատեսվում է «զանգվածային լրատվության միջոց» հասկացությունը: Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: Ընդունվել է:	1. Նախագծում փոփոխություն չի կատարվել: 2. Նախագծում կատարվել է փոփոխություն: 3. Նախագծում փոփոխություն չի կատարվել: 4. Նախագծում կատարվել է փոփոխություն: 5. Նախագծում կատարվել է փոփոխություն:

			Չի ընդունվել: Որևէ հակասություն առկա չէ, քանի որ VI-րդ գլխի 27-րդ կետը մատնանշում է Խորհրդի նախագահի իրավունքները և պարտականությունները:	6. Նախագծում փոփոխություն չի կատարվել:
12	Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդական հարցերի նախարարություն 2015-04-14 1/5.1/491-15	Առաջարկում ենք Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 18-ի N 16 արձանագրային որոշման մեջ լրացում կատարելու և Հայաստանի Հանրապետության նախարարին կից հանրային խորհրդի օրինակելի աշխատակարգին հավանություն տալու մասին» արձանագրային որոշման նախագծի հավելվածի 3-րդ և 30-րդ կետերը համահունչ դարձնել, մասնավորապես՝ 30-րդ կետի 2-րդ ենթակետի «Հայաստանի Հանրապետության նախարարի հրամանով՝» բառերը փոխարինել «Խորհրդի նախագահի կողմից՝» բառերով:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:

13	Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարություն 2015-04-20 01/16.1/972-15	Հայաստանի Հանրապետության նախարարությունների առջև դրված խնդիրներն ու գործառույթներն արդյունավետ իրականացնելու, գործունեության թափանցիկությունն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 20-ի N47 արձանագրային որոշմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 18-ի նիստի N16 արձանագրային որոշումը լրացվել է 15.1 կետով, որով հավանություն է տրվել Հայաստանի Հանրապետության նախարարներին կից կոլեգիայի ստեղծմանը և հաստատվել է դրա օրինակելի աշխատակարգը: 2008 թվականին ստեղծվել են նախարարներին կից կոլեգիաներ, իսկ Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարությունում՝ նախարարին կից ատյան, որը իր առջև դրված խնդիրներն ու գործառույթներն արդյունավետ իրականացնելով, ապահովել է գործունեության թափանցիկությունը, նախարարության ռազմավարական ծրագրերի համակողմանի քննարկումը և իրականացումը:	Չի ընդունվել: Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 18-ի N 16 արձանագրային որոշման մեջ լրացում կատարելու և Հայաստանի Հանրապետության նախարարին կից կոլեգիայի օրինակելի աշխատակարգին հավանություն տալու մասին» թիվ 47 արձանագրային որոշման 1-ին կետով լրացված 15.1-րդ կետը և Նախագծի 1-ին կետով լրացվող 15.2-րդ կետը հստակեցնում և տարանջատում են Կոլեգիաների և Խորհուրդների գործառույթները, մասնակից կողմերի կազմը, իրավունքները և պարտականությունները:	Նախագծում փոփոխություն չի կատարվել:

		Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի նիստի N32 արձանագրային որոշմամբ հավանություն է տրվել «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության երկրորդ գործողությունների ծրագրին, որով արձանագրվել է ՀՀ նախարարությունների կոլեգիաների/խորհուրդների օրինակելի աշխատակարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտությունը: Ներկայացված նախագծում առաջարկվող դրույթները՝ նախարարին կից հանրային խորհրդի լիազորությունների մասով, ըստ էության ընդունելի են: Սակայն, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 18-ի N 16 արձանագրային որոշումը լրացնել նոր 15.2 կետով և նախարարությունում ստեղծել նախարարին կից ևս մեկ խորհրդատվական կոլեգիալ մարմին՝ հանրային խորհուրդ, նպատակահարմար չէ, քանի որ նախագծում առաջարկվող հանրային խորհրդի լիազորությունների որոշ մասն արդեն իսկ իրականացվում է նախարարին կից		

		կոլեգիայի կողմից: Ելնելով վերոգրյալից, առաջարկում եմ ընդլայնել նախարարներին կից կոլեգիաների լիազորությունների շրջանակները՝ այն լրացնելով նախագծում առաջարկվող նախարարներին կից հանրային խորհուրդների լիազորություններով ու գործառույթներով: Ուստի նպատակահարմար է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 18-ի N 16 արձանագրային որոշման մեջ կատարել փոփոխություն՝ Հայաստանի Հանրապետության նախարարության օրինակելի կանոնադրության 15.1 կետը և Հայաստանի Հանրապետության նախարարին կից կոլեգիայի օրինակելի աշխատակարգը շարադրել նոր խմբագրությամբ՝ սահմանելով նախագծում առաջարկվող նախարարին կից հանրային խորհրդի լիազորությունները և գործառույթները:		
14	Հայաստանի Հանրապետության բնապահպանութ	1. Նկատի ունենալով, որ որոշ նախարարներ արդեն իսկ ունեն սահմանված կարգով ձևավորված հանրային խորհուրդներ, որոնք գործում են և ձևավորվել է դրական	Չի ընդունվել: Քանի որ նախկինում հանրային խորհրդի համապարփակ կարգավորումը չի եղել, ուստի և	Նախագծում փոփոխություն չի կատարվել:

	յան նախարարությունն 2015-04-20 1/04.3/10794-15	աշխատանքային ավանդույթներ, նպատակահարմար չէ նոր կազմ ձևավորելը: Այս կապակցությամբ առաջարկվում է նախագծում նախատեսել գործող խորհուրդների պահպանումն ապահովող դրույթներ:	պետք է նախատեսվի նախարարին կից հանրային խորհրդի աշխատակարգը և համապատասխանեցվի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 18-ի N 16 արձանագրային որոշման մեջ լրացում կատարելու և Հայաստանի Հանրապետության նախարարին կից հանրային խորհրդի օրինակելի աշխատակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշմամբ նախատեսված դրույթներին: Բացի այդ, գործող խորհրդակցական մարմինները պարտադիր չէ վերանան, քանի որ դրանք այլ խորհրդակցական մարմնի կարգավիճակ ունեն:	
		2. Նախագծի հավելվածի 11-րդ կետում <<առնվազն երկու ամիսը մեկ>> բառերն առաջարկվում է փոխարինել <<առնվազն երեք	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան

		ամիսը մեկ>> բառերով, նկատի ունենալով խորհրդին վերաբերող հարցերի նեղ շրջանակը և անհրաժեշտության արտահերթ նիստ գումարելու հնարավորության առկայությունը:		փոփոխություն:
		3. Նկատի ունենալով, որ նախագծի հավելվածի 31-րդ կետով արդեն իսկ նախատեսվում է Խորհրդի նիստերում ընդունված որոշումները Նախարարության պաշտոնական կայքում տեղադրելու պահանջ և այս կապակցությամբ աննպատակահարմար է արձանագրությունների տեղադրումը, առաջարկվում է նախագծի հավելվածի 25-րդ կետից հանել <<և հրապարակվում Նախարարության պաշտոնական կայքում>> բառերը:	Չի ընդունվել: Խնդիրը կայանում է նրանում, որ քվեարկության արդյունքները, որոնց արձանագրվում են արձանագրության մեջ և ընդունված որոշումները կարող են տարբեր լինել:	Նախագծում փոփոխություն չի կատարվել:
15	«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպություն	1. Նախագծի 11-րդ հոդվածը սահմանում է Խորհրդի նիստերի անցկացման առնվազն երկամսյա ժամկետ: Առաջարկում ենք այս ժամկետը համադրել նախարարության իրավազորությունների շրջանակում հանրային նշանակության հարցերի և/կամ իրավական ակտերի հոսքի հետ: Եթե կարևոր օրինագծեր մշակվում և քննարկվում են ավելի հաճախ, քան	Չի ընդունվել: Նախագծի հավելվածի 11-րդ կետում նշվում է, որ Խորհրդի նիստերը գումարվում են առնվազն երեք ամիսը մեկ անգամ, ինչը ենթադրում է, որ չի բացառվում նիստերի առավել հաճախ գումարվելու հնարավորությունը:	Նախագծում փոփոխություն չի կատարվել:

		երկու ամիսն է, ապա կարծում ենք, որ աշխատակարգով կարելի է սահմանել Նիստերի անցկացման ավելի փոքր պարտադիր ժամկետ:		
		2. Նախագծի 15-րդ հոդվածը նախատեսում է Խորհրդի նիստերի դռնփակ անցկացման հնարավորություն: Գտնում ենք, որ այս դրույթն անհրաժեշտ չէ: Հաշվի առնելով այն, որ Խորհրդի անդամները հասարակության ներկայացուցիչներ են եւ հասարակության մաս, պաշտոնական պարտականություններով չկաշկանդված, նաեւ՝ այլ քաղաքացիների հետ հավասար իրավունքներով եւ պարտականություններով օժտված, հետեւաբար կամայական հարց, որին կարող են հաղորդակից լինել Խորհրդի անդամները, պետք է հասանելի լինի նաև լայն հանրությանը, և հակառակը կամայական հարց, որը պաշտպանված է գաղտնիության որևէ աստիճանով, պետք է հավասարապես հասանելի լինի նաև Խորհրդի անդամներին: Միաժամանակ, Խորհրդում քննարկվող հարցերն այս կամ այն ժամանակահատվածում	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է փոփոխություն:

		մասսայականացնելու նպատակահարմարության հարցը կարող է լուծվել Խորհրդի տվյալ նիստում այդ մասին քննարկումների արդյունքում:		
		3. Առաջարկում ենք Նախագծի 17-րդ հոդվածով սահմանել Խորհրդի արտահերթ նիստի մասին ծանուցելու ընթացակարգը եւ ժամկետները:	Չի ընդունվել: Արտահերթ նիստի ծանուցման հարցը կարգավորվում է նույն կերպ, ինչ հերթական նիստի ընթացակարգը:	Նախագծում փոփոխություն չի կատարվել:
16	Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունն 2015-04-14 01/5.1/1937-15	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 18-ի N 16 արձանագրային որոշման մեջ լրացում կատարելու և Հայաստանի Հանրապետության նախարարին կից հանրային խորհրդի օրինակելի աշխատակարգին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման նախագծի հավելվածի 5-րդ կետի <<սույն որոշման>> բառերը և 8-րդ կետի, 27-րդ ու 28-րդ կետերի 4-րդ ենթակետերի <<սույն>> բառը առաջարկում ենք հանել:	Չի ընդունվել: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն նշվում է, որ արգելվում է կատարել անորոշ հղումներ, մասնավորապես, միևնույն ակտի այլ մասերին հղումներ կատարելիս չեն կարող առանձին կիրառվել «սույնում», «սույնով» բառերը: Իսկ Նախագծում նման անորոշ հղում առկա չէ:	Նախագծում փոփոխություն չի կատարվել:

17	Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն 2015-04-28 01/10/4542-15	Տեղեկացնում եմ, որ ՀՀ կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 1567-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կանոնադրությունը, նախարարության աշխատակազմի կառուցվածքը, նախարարության աշխատակազմին հանձնվող գույքի կազմը և չափը հաստատելու մասին» N 1579-Ն որոշման մեջ կատարվել է հետևյալ լրացումը. «14.1. Նախարարության առջև դրված խնդիրներն ու գործառույթներն արդյունավետ իրականացնելու նպատակով նախարարին կից ստեղծվում է կոլեգիա: Նախարարին կից կոլեգիան՝ 1) օժանդակում է նախարարության գործունեության ռազմավարական պլանավորման, քաղաքական որոշումների ընդունման, միջոցառումների ծրագրերի մշակման գործընթացներին.	Չի ընդունվել: Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 18-ի N 16 արձանագրային որոշման մեջ լրացում կատարելու և Հայաստանի Հանրապետության նախարարին կից կոլեգիայի օրինակելի աշխատակարգին հավանություն տալու մասին» թիվ 47 արձանագրային որոշման 1-ին կետով լրացված 15.1-րդ կետը և Նախագծի 1-ին կետով լրացվող 15.2-րդ կետը հստակեցնում և տարանջատում են Կոլեգիաների և Խորհուրդների գործառույթները, մասնակից կողմերի կազմը, իրավունքները և պարտականությունները:	Նախագծում փոփոխություն չի կատարվել:

		2) նպաստում է ռազմավարական ծրագրերի իրականացմանը, գնահատմանը և այդ գործընթացներում քաղաքացիական հասարակության մասնակցությանը. 3) մշակում և ներկայացնում է նախարարության կառավարման արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկություններ:»: Հիմք ընդունելով կանոնադրության համապատասխան կետը ՀՀ կրթության և գիտության նախարարի համապատասխան հրամանով ստեղծվել է նախարարին կից կոլեգիա, հաստատվել կոլեգիաի կազմը և աշխատակարգը:		
18	Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն 2015-04-22 ՊՆ/510-613	Հայտնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարի 07.08.2009 թ. N 862 հրամանով ստեղծվել և արդյունավետ գործում է ՀՀ պաշտպանության նախարարին առընթեր հասարակական խորհուրդ, որը զինված ուժերում իրականացնում է հասարակական վերահսկողություն, զինված ուժերի գործունեության և ՀՀ պաշտպանության կազմակերպման գործընթացում ապահովում է ՀՀ քաղաքացիների և հասարակական շահագրգիռ կազմակերպությունների ու ՀՀ	Չի ընդունվել: Հաշվի առնելով այն, որ ՀՀ պաշտպանության նախարարին առընթեր արդեն իսկ գործում է հանրային խորհուրդ, որն ապահովում է հասարակական շահագրգիռ կազմակերպությունների ու ՀՀ պաշտպանության նախարարության սերտ համագործակցությունը, ուստի	Նախագծում փոփոխություն և լրացում չի արվել:

		պաշտպանության նախարարության սերտ համագործակցությունը, քաղաքացիների և զինծառայողների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը, զինված ուժերում տիրող ընդհանուր վիճակի և առկա խնդիրների վերաբերյալ տեղեկատվություն է տրամադրում ՀՀ պաշտպանության նախարարին և առաջարկություններ ներկայացնում դրանց լուծման ուղղությամբ, աջակցում է զինված ուժերում իրավակարգի և օրինականության, նախազորակոչային տարիքի քաղաքացիների և զինծառայողների շրջանում ռազմահայրենասիրական դաստիարակության ամրապնդմանը: Միաժամանակ, ՀՀ պաշտպանության նախարարին առընթեր հասարակական խորհրդում ընդգրկված են մեկ տասնյակից ավելի հասարակական կազմակերպությունների և քաղաքացիական խմբերի ներկայացուցիչներ: Նկատի ունենալով վերոգրյալը, առաջարկում ենք որոշման նախագծի 15.2-րդ կետում «նախարարության» բառից հետո լրացնել «(բացառությամբ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության)» բառերը:	հանրային խորհրդի գործունեությունը ՀՀ ՊՆ-ին կից ևս արդիական է, հետևաբար նաև անհրաժեշտություն է առաջանում իրավական կարգավորման ենթարկել ադ մարմնի գործունեությունը: Ելնելով վերոգրյալից՝ բացառության սահմանման անհրաժեշտությունը բացակայում է:	

19	«Արազա» հասարակական բարեգործական կազմակերպություն	1. Առաջարկում ենք 15.2. կետը ձևակերպել հետևյալ փոփոխություններով. «Նախարարության առջև դրված խնդիրներն ու գործառույթներն արդյունավետ, մասնակցային և թափանցիկ իրականացնելու նպատակով նախարարությանը կից ստեղծվում է հանրային խորհուրդ: Հայաստանի Հանրապետության նախարարությանը կից հանրային խորհուրդի նպատակն է՝ - օժանդակել նախարարության գործունեության ռազմավարական պլանավորման, քաղաքական որոշումների կայացման, միջոցառումների ծրագրերի մշակման գործընթացներին - նպաստել ռազմավարական ծրագրերի իրականացմանը, գնահատմանը և այդ գործընթացներում քաղաքացիական հասարակության մասնակցության ինստիտուցիոնալ մեխանիզմների ձևավորմանը. - Հավաքագրել, քննարկման առարկա դարձնել նախարարության կառավարման արդյունավետության և առանձին	Չի ընդունվել: (Նախագծի վերջնական խմբագրված տարբերակը համաձայնեցվել է «Արազա» հասարակական բարեգործական կազմակերպության հետ): Առաջարկության մեջ ներկայացված նպատակները առավելապես հանդիսանում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 18-ի N 16 արձանագրային որոշման մեջ լրացում կատարելու և Հայաստանի Հանրապետության նախարարին կից կոլեգիայի օրինակելի աշխատակարգին հավանություն տալու մասին» թիվ 47 արձանագրային որոշման 1-ին կետով լրացված 15.1-րդ կետով	Նախագծում փոփոխություն չի կատարվել:

		ստորաբաժանումների ծառայությունների որակի բարձրացմանն ուղղված հասարակության տարբեր շերտերի կարծիքներն ու տեսակետները, անկախ հետազոտությունների և մոնիթորինգի ընթացքում բացահայտված հիմնախնդիրները և դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ, ապահովել հանրային շահերի պաշտպանությունը և հանրային պահանջարկի առաջ մղման լոբբինգի աշխատանքները: Հիմնավորում. Առաջարկված լրացումը. «մասնակցային» բառը ենթադրում եմ մեխանիկական վրիպակ է, իսկ եթե ոչ ապա պետք է հիշեցնեմ, որ «մասնակցային» կառավարման պահանջը և սկզբունքները բխում են. ա. ԲԿԳ մարտահրավերներից բ. 1990թ-ի հունիսի 7-ին ընդունված «Միջավայրի մասին տեղեկատվության հասանելիության ապահովման մասին» ԵՄ որոշումից, գ. 1998թ. հունիսի 25-ին «Միջավայր Եվրոպայի համար» 4-րդ նախարարական կոնֆերանսի ընդունած Օրհուսի կոնվենցիահից:	նախատեսված կոլեգիայի նպատակներ: Իսկ Կոլեգիան և Խորհուրդը տարբեր մարմիններ են հանդիսանում: Մասնավորապես, նախարարին կից կոլեգիան օժանդակում է նախարարության գործունեության ռազմավարական պլանավորման, քաղաքական որոշումների կայացման, միջոցառումների ծրագրերի մշակման գործընթացներին, նպաստում է ռազմավարական ծրագրերի իրականացմանը, գնահատմանը և այդ գործընթացներում քաղաքացիական հասարակության մասնակցությանը, մշակում և ներկայացնում է նախարարության կառավարման արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկություններ: Ընդ որում համաձայն վերը նշված որոշման հավելվածի 4-րդ կետի	

		«Նախարարին» բառի փոխարեն «նախարարության» բառով փոխելու առաջարկը խիստ սկզբունքային մոտեցում է, հիմնված՝ նախարարի փոփոխությամբ պայմանավորված խորհրդի գործունեությունը և խորհրդի կազմն ընտրելիս վերջինիս սուբյեկտիվ մոտեցմամբ կառավարելու ռիսկերի կանխարգելման, ինչպես նաև միջազգային փորձի ներդրմամբ ՀՀ-ում առկա մշակույթի փոփոխման հանրային պահանջարկով: Հայաստանի Հանրապետության նախարարությանը կից հանրային խորհուրդի նպատակների լրացումը պայմանավորված է նրանով, որ այն հստակեցնում է՝ - խորհրդի գործառույթների շրջանակը, - պետական կառույցների և ՔՀԿ-ների փոխգործակցության և միմյանցից սպասելիքների շրջանակն ու համանման ընկալումները: Ինչը կնպաստի խորհրդի գործունեության արդյունավետության բարձրացմանը:	կոլեգիայում ևս կարող են ներգրավել քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, հեղինակության վայելող ճանաչված գործիչներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ և այլն: Ընդ որում վերջիններս ներգրավում են միայն իրենց համաձայնության դեպքում: Նույն որոշման հավելվածի 4-րդ կետի համաձայն կոլեգիայում ներգրավում են նախարարի տեղակալները, նախարարության աշխատակազմի ղեկավարը: Այսինքն՝ կոլեգիաների և խորհուրդների միջև տարբերություն կա և կազմի և քննարկվող հարցերի բնույթի առումով:	
		2. Առաջարկ. Կոլեգիաներում քննարկվող հարցրերի	Չի ընդունվել: (Նախագծի վերջնական խմբագրված տարբերակը համաձայնեցվել է	Նախագծում փոփոխություն չի կատարվել:

		շրջանակը. ա) նախարարության համակարգի բարեփոխումների, ընդհանուր քաղաքականության ուղղությունների, ինչպես նաև առաջնահերթություններին վերաբերվող հիմնախնդիրներ, բ) ՀՀ կառավարության գործունեության ծրագրի, ազգային ռազմավարական ծրագրերի, այդ թվում նախարարության, դրանց վրա հիմնված գործունեության տարեկան ծրագրի, գերակա ուղղությունների վերաբերյալ նախագծեր, կամ իրականացված ծրագրերի ազդեցության գնահատման անկախ հետազոտության արդյունքների վրա հիմնված նախագծեր. գ) նախարարության տարեկան բյուջետային ծրագրի, միջնաժամկետ ծրագրային ծախսերի, տարեկան բյուջետայի նախագծերը և հաշվետվությունները. դ) նախարարության գերատեսչությունների և նախարարության ստորաբաժանումների և պետական բյուջեի ֆինանսավորմամբ համակարգի կազմակերպությունների կողմից	«Արազա» հասարակական բարեգործական կազմակերպության հետ): Առաջարկվող հարցերի շրջանակը հանդիսանում է նախարարին կից կոլեգիայում քննարկվող հարցերի շրջանակը: Ինչը տվյալ դեպքում կառաջացնի Կոլեգիայի և Խորհրդի գործառույթների սերտաջում և նույնացում:	

		մատուցվող հանրային ծառայությունների որակի և մատչելիության գնահատման մոնիթորինգի ցուցանիշների սահմանման և իրականացման հիմնախնդիրները, ե) նախարարության ստորաբաժանումների և պետական բյուջեի ֆինանսավորմամբ համակարգի կազմակերպությունների կողմից մատուցվող հանրային ծառայությունների որակի և մատչելիության գնահատման հաշվետվությունները, այդ թվում նաև անկախ մոնիթորինգների, հետազոտությունների հաշվետվությունները զ) նախարարության համակարգում և համակարգից դուրս տեղեկատվության տրամադրման (հաղորդակցային) ռազմավարությունն, այդ թվում նաև ՔՀԿ համայնքի ռեսուրսների ներգրավմամբ: Հիմնավորում. Առաջարկվող փոփոխությունների համար առաջնորդվում ենք հետևյալ հիմնարար սկզբունքով. - խորհուրդն իր բովանդակությամբ և իրավական կարգավիճակով հանրային		

		կառավարման՝ որոշումների կայացման գործընթացում թափանցիկ, մասնակցային և հաշվետու կառավարման համար հասարակական մասնակցության և վերահսկողության խորհրդատվական հարթակ է, ուստի նրա գործունեության շրջանակը պետք է բխի նախարարության հիմնական գործառույթներից - խորհուրդը գործելու է նիստերի միջոցով, ուստի խորհրդի կողմից քննարկվող հարցերի շրջանակի հստակեցումը կբարձրացնի խորհրդի գործունեության արդյունավետության և հանրային ազդեցության մակարդակը, - Կնպաստի հանրության կողմից խորհրդի գործունեության վերաբերյալ ընկալման, վստահության բարձրացմանը, դրանով իսկ հանրային կառավարման գործընթացին ավելի լայն շրջանակների ներգրավմանը: Ի դեպ առաջարկները հիմնված են միջազգային փորձի, ինչպես նաև ՀՀ-ում առկա համակարգի ազդեցության գնահատման հետազոտության		

		արդյունքների վրա(տես կից հետազոտությունը):		
		3. Առաջարկ. Հավելվածի 3-րդ կետը ձևակերպել հետևյալ կերպ. Խորհրդի անհատական կազմը և քարտուղարին/նախագահի օգնականին հաստատում է Խորհրդի նախագահը: Խորհրդի կազմում ընդգրկվում են առնվազն 20 անդամներ: Խորհրդի աշխատանքները և կազմակերպական հարցերը համակարգում է խորհրդի քարտուղարը/նախագահի օգնականը, որն ընտրվում է խորհրդի կազմից, խորհրդի անդամների բաց/փակ քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ, երկու տարի ժամկետով: Հիմնավորում. Կենտրոնական Եվրոպայի փորձի համաձայն խորհուրդները հիմնականում նախագահում են հենց ՔՀԿ համայնքի ներկայացուցիչները; Հայաստանյան փորձը ցուց է տվել, որ որոշ խորհուրդների կառավարման հարցում	Ընդունվել է մասնակի:	Նախագծի 21-րդ կետը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ Խորհրդի նիստերն արձանագրում է նիստի քարտուղարը: Խորհրդի նիստի քարտուղարը նշանակվում է նիստը նախագահողի կողմից՝ Խորհրդի անդամների կազմից:

		նախագահի օգնականի, կամ քարտուղարի ինստիտուտ է գործում, որոնք հադիսանում են ՔՀԿ ներկայացուցիչներ; Ընդ որում հետազոտությունները վկայում են, որ այդ խորհուրդներն առավել արդյունավետ են գործում; Դրանք են՝ ՀՀ Պաշտպանության նախարարության խորհուրդը, ՀՀ Առողջապահության նախարարության խորհուրդները, ՀՀ Կառավարության Կայուն զարգացման խորհուրդը և այլն; Դա բացատրվում է նրանով, որ խորհրդի կառավարման իրավասությունների և պարտականությունների ապակենտրոնացումը մոտիվացնում է ՔՀԿ համայնքին, ինչպես նաև բարձրացնում մասնակցության արդյունավետության և համայնքի հետ հետադարձ կապի ապահովման նրանց պատասխանատվությունը:		
		4. Առաջարկ. Հավելվածի 4-րդ կետը ձևակերպել հետևյալ կերպ. Խորհրդի կազմում կարող են ընդգրկվել նախարարության գործունեության հիմնական ուղղություններին իրենց գործունեության	Ընդունվել է ի գիտություն: Նախագծի 4-րդ կետով նախատեսված «Այլ շահագրգիռ անձ» հասկացության մեջ է մտնում են նաև թվարկված մասնակիցները:	

		բնույթով առնչվող հասարակական, նախարարության հետ համագործակցության հուշագրերով ծրագրեր իրականացնող միջազգային և տեղական կազմակերպությունների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ, անկախ փորձագետներ, ինչպես նաև այլ շահագրգիռ անձինք: Հիմնավորում. Առաջարկվող փոփոխությունը վերաբերվում է նախարարության հետ համագործակցության հուշագրերով ծրագրեր իրականացնող միջազգային և տեղական կազմակերպությունների ներգրավմանը, ինչը ևս պայմանավորված է ինչպես միջազգային այնպես էլ ՀՀ-ում կիրառվող պետական և ոչ պետական հատվածի մասնակցային կառավարման բավական արդյունավետ մշակույթին, որը սակայն դուրս է մնացել ինստիտուցիոնալ համատեքստից, ինչը հաճախ խոչընդոտում է միասնական հանրային կարծիքով հանդես գալուն, ինչպես նաև ՔՀԿ հատվածի կողմից իրականացվող ծրագրերի կոորդինացիային ու կրկնությունների		

		բացառմանը:		
		5. Առաջարկ. Հավելվածի 5-րդ կետը ձևակերպել հետևյալ կերպ. Խորհուրդը ձևավորվում է բաց, թափանցիկ մրցութային հիմունքներով; Խորհրդի կազմի ընտրությունն իրականացվում է ՔՀԿ համայնքի կողմից, այդ նպատակով Նախարարության ստեղծած հատուկ կայքում քվեարկություն կազմակերպելու միջոցով: Ելնելով նախարարության առանձին գերատեսչությունների քանակից և համապատասխան գերատեսչության կողմից սպասարկվող շահառու խմբերի թվաքանակից կսահմանվեն համապատասխան քվոտաներ, ելնելով խորհրդի 20 հոգանոց կազմից: Կայքում քվեարկության արդյունքները կամփոփեն 5-7 հոգանոց ընտրական հանձնաժողովը կայքի ադմինիստրատորի հետ: Որից հետո հանձնաժողովի անդամներից յուրաքանչյուրը կգնահատի ընտրվելու հայտ ներկայացրած կազմակերպություններին, ըստ ստորև սահմանված չափորոշիչների բալային համակարգի: Հանձնաժողովի կողմից	Ընդունվել է մասնակի: Առաջարկվող գործընթացը բարդություններ է ենթադրում. Մասնավորապես՝ ենթադրվում է ստեղծել հատուկ կայք, ինչը լրացուցիչ ֆինանսական ծախսեր է նախատեսում: Նախագծով սահմանված ընթացակարգը ևս ապահովում է խորհրդի ձևավորման անկողմնակալություն: Իսկ ինչ վերաբերում է չափանիշներին, ապա դրանք ամրագրել են Նախագծով նախատեսված հավելվածի 4-րդ կետով:	Նախագծում կատարվել է փոփոխություն:

		գնահատման բալերը կավելացվեն քվեարկության արդյունքներին, որի հիման վրա էլ կբացահայտվեն հաղթողները: Ընտրական հանձնաժողովը ևս ընտրվում է ՔՀԿ համայնքի կողմից, նույն կայքում քվեարկություն կազմակերպելու միջոցով: Ընտրություններին մասնակցելու համար բոլոր կազմակերպություններն անկախ նրանից՝ ընտրելու, ընտրվելու, թե հանձնաժողովում ներգրավվելու հայտ են ներկայացնում, պետք է գրանցվեն կայքում՝ օրենքի համաձայն անձի կամ կազմակերպության մասին էական հանդիսացող տվյալները մուտքագրելով: Կայքում գրանցվելուց հետո վերջիններս կկարողանան մասնակցել քվեարկությանը: Կայքի ավտոմատ ռեժիմով ծրագիրը թույլ չի տա նույն կազմակերպությանը, կամ անձին գրանցվել ու քվեարկել մեկից ավել անգամ, գրանցվել այն անձանց, կամ կազմակերպություններին, որոնց կողմից ներկայացված տեղեկատվությունը չի համապատասխանում պաշտոնական տվյալներին և օրենքով սահմանված էական համարվող պահանջներին: Ընտրության կազմակերպումը կապահովի		

		նախարարությունը պաշտոնական հայտարարություն տեղադրելով պաշտոնական կայքում, ինչպես նաև տարածելով լրատվամիջոցներով: Ընտրական գործընթացի համար կտրվի ոչ ավել քան երկու ամիս ժամանակ: Ընտրական հանձնաժողովի կողմից քվեարկության արդյունքների ամփոփման, ինչպես նաև կազմակերպությունների հայտերի գնահատման համար կտրվի 7-10 օր ժամանակ, ելնելով գրանցված կազմակերպությունների թվից: Ընտրությունների արդյունքները կհրապարակվեն ընտրական հանձնաժողովի կողմից քվեարկության, կազմակերպությունների հայտերի գնահատման արդյունքների ամփոփումից հետո ոչ ուշ քան 3 օրվա ընթացքում: Խորհրդի առաջին նիստը տեղի կունենա ընտրության արդյունքների հրապարակումից հետո առաջին շաբաթվա ընթացքում, որտեղ ընտրական հանձնաժողովի համակարգմամբ ընտրված խորհրդի անդամները կընտրեն խորհրդի քարտուղարին/նախագահի օգնականին: Ընտրական հանձնաժողովը		

		կամփոփի ընտրությունների վերջնական արդյունքները և այն պաշտոնապես կներկայացնի ՀՀ նախարարի հաստատմանը: Խորհրդի կազմաը և վերջիններիս կողմից ընտրված խորհրդի քարտուղարը/նախագահիօգնականը կհաստատվեն նախարարի հրամանով/որոշմամբ, ընտրական հանձնաժողովի կողմից ներկայացված պաշտոնական հաշվետվությունը ստանալուց հետո ոչ ուշ քան 2 շաբաթվա ընթացքում: Ընտրության սկզբունքային չափորոշիչներ են. ■ կազմակերպության խորհրդի կազմում ընդգրկվելու հետաքրքրության հստակ հիմնավորումը, ■ խորհրդի գործառույթների շրջանակում իր, կամ իր դեմքով ներկայացրած կազմակերպության ունենալիք կոնկրետ դերակատարության հստակ հիմնավորումը, ■ մոնիթորինգի, հետազոտության, քաղաքականությունների վերլուծության, շահերի պաշտպանության, լոբբինգի		

		գործունեության ուղղությամբ անձի, կամ կազմակերպության կարողությունների (ներառյալ նյութական և մարդկային) նկարագրությունը, կազմակերպության անդամների և շահառուների թիվն ըստ պաշտոնական տվյալների,■ ոլորտում կատարված նախկին գործունեության մասնագիտական փորձառության և ձեռքբերումների նկարագրությունը; Հավասար ձայներ հավաքելու դեպքում խորհրդում ընդգրկվելու նախապատվությունը տրվում է այն անձին, կամ կազմակերպությանը, որը լիազորված է ցանցերի կողմից, իսկ փորձագետների դեպքում՝ միջազգային փորձառությամբ հանրային ճանաչում և ազդեցություն ունեցող երիտասարդներին և կանանց: Հիմնավորում. Փոփոխության այս առաջարկը ևս բխում են. ա. ԲԿԳ մարտահրավերների բ. 1990թ-ի հունիսի 7-ին ընդունված «Միջավայրի մասին տեղեկատվության հասանելիության ապահովման մասին» ԵՄ		

		որոշման, գ. 1998թ. հունիսի 25-ին «Միջավայր Եվրոպայի համար» 4-րդ նախարարական կոնֆերանսի ընդունած Օրհուսի կոնվենցիայի պահանջներից, դ. PFCS, «Արազա» կազմակերպությունների և «Հանրային ցանցի» կողմից իրականացված «Մասնակցային կառավարման մշակույթը պետական խորհրդակցական մարմիններում.տեղական և միջազգային փորձի ուսումնասիրության» արդյունքներից: Համաձայն որի ՔՀԿ համայնքը հանրային կառավարմանը մասնակցելու համար պետք է ունենա ինքնաձևավորման ազատ իրավունք և բաց ու թափանցիկ գործընթացների կազմակերպման հնարավորություն, ինչպես նաև ներկայացուցչականության «մանդատի» երաշխիքներ: Այս ամենը կբարձրացնի թե խորհրդի, թե նախարարության հանրային վստահությունն ու վարկանիշը, թե պատասխանատվությունը կառավարման խորհրդատվական մարմիններում հանդես գալ ոչ թե նեղ խմբային, այլ հանրային շահերի պաշտպանությամբ: Սա ՀՀ-ում առկա հանրային խորհուրդների ինստիտուցիոնալ		

		համակարգի առավել խոցելի հանգույցն է, որի լուծումը խիստ կարևորվում է ՔՀԿ համայնքի կողմից: Դրա վկայությունն են ոչ միայն վերը նշված հետազոտությունների արդյունքներն, այլ նաև վերջին երկու ամսվա ընթացքում ՀՀ Կառավարության կողմից նորաստեղծ Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդի ձևավորման շուրջ Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հակակոռուպցիոն կոալիցիայի, «Հանրային ցանցի», Արևելյան գործընկերության ազգային պլատֆորմի հայտարարությունները:		
		6. Հավելվածի 7-րդ կետը ձևակերպել հետևյալ կերպ. Երկու տարին մեկ անգամ Խորհրդի անդամների մեկ երրորդը/կեսը/ ենթարկվում է ռոտացիայի՝ խորհրդի կազմում մնացողների կազմն ընտրում են խորհրդի անդամները, փակ քվեարկությամբ, իսկ նոր կազմի ընտրությունը նորից իրականացվում է նույն մրցութային կարգով, նույն կայքի միջոցով: Հիմնավորում. Այս փոփոխությունը բխում է 5-րդ կետում	Չի ընդունվել: (Նախագծի վերջնական խմբագրված տարբերակը համաձայնեցվել է «Արազա» հասարակական բարեգործական կազմակերպության հետ): Երկու տարին մեկ անգամ Խորհրդի անդամների մեկ երրորդի ռոտացիայի ենթարկվելը հիմնավոր է, իսկ արդեն իսկ մնացած անդամների վերընտրման	Նախագծում փոփոխություն չի կատարվել:

		առաջարկված փոփոխությունից:	անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ վերջիններս ռոտացիայի չեն ենթարկվում:	
		7. Առաջարկ. Հավելվածի 10-րդ կետը լրացնել հետևյալ բառերով. «և խորհրդի անդամների համաձայնությամբ» Խորհրդի նախագահը կարող է իր նախաձեռնությամբ և խորհրդի անդամների համաձայնությամբ որպես Խորհրդի անդամ ընդգրկել այլ շահագրգիռ անձի (վերջինիս համաձայնությամբ), եթե գտնում է, որ տվյալ անձի մասնակցությունը կարող է էական նշանակություն ունենալ Խորհրդի ընթացիկ աշխատանքների համար: Հիմնավորում. Այս փոփոխությունը բխում է 5-րդ կետում առաջարկված փոփոխությունից:	Չի ընդունվել: (Նախագծի վերջնական խմբագրված տարբերակը համաձայնեցվել է «Արազա» հասարակական բարեգործական կազմակերպության հետ): Նախագծի հավելվածի 5-րդ կետից բխում է, որ Խորհրդի անդամներին ընտրում է Նախագահը (նախարարը)՝ նրանց դիմումի հիման վրա:	Նախագծում փոփոխություն չի կատարվել:
		8. Առաջարկ. Հավելվածի 11-րդ կետում երկու ամիս ժամկետը փոխարինել եռամսյակը մեկ ժամկետով: Հիմնավորում. Գործող ինստիտուցիոնալ համակարգի և	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:

		միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ավելի հաճախ խորհրդի նիստեր գումարելիս օրակարգային հարցեր կամ չեն ձևավորվում, կամ բավարար նյութեր չեն պարունակում, ինչը նիստերը դարձնում է ֆորմալ ու անարդյունավետ:		
		9. Առաջարկ. Հավելվածի 16-րդ կետը ձևակերպել հետևյալ կերպ. Խորհրդի նիստերն անցկացվում են Խորհրդի նախագահի կողմից հաստատված օրակարգով: Խորհրդի նախագահը որոշում է Խորհրդի նիստի անցկացման օրը, վայրը և ժամը: Խորհրդի նիստերի անցկացման մասին անդամները ծանուցվում են նիստից առնվազն քսան օր առաջ, որին կցված ներկայացվում են անհրաժեշտ նյութերը: Խորհրդի նիստերի օրակարգը ձևավորվում է խորհրդի նախագահի և խորհրդի անդամների կողմից, նիստերի միջև ընկած երկու ամսվա ժամանակահատվածում, ներկայացված հարցերի միջոցով, որոնց կցված ներկայացվում են անհրաժեշտ նյութերը:	Ընդունվել է մասնակի:	Նախագծի 16-րդ կետը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «Խորհրդի նիստերն անցկացվում են Խորհրդի նախագահի կողմից հաստատված օրակարգով: Խորհրդի օրակարգը ձևավորվում է Խորհրդի նախագահի և անդամների կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա: Խորհրդի

		Հիմնավորում. Այս փոփոխությունը բխում է խորհրդի հիմնական գործառույթից, որն է՝ հանրային կառավարման գործընթացում հանդես գալ որպես հասարակության կողմից բարձրացված, հանրային հնչեղություն ստացված հիմնախնդիրների շուրջ պետական կառույցների և հանրության միջև երկխոսության հարթակ: Որը ենթադրում է, որ խորհրդի անդամները պետք է ունենան նիստերի օրակարգի ձևավորման անմիջական մասնակցություն, դա նաև կողմերի համաչափ իրավասությունների ապահովման, քաղաքացիական հասարակության կողմից օրակարգում հարցեր ներկայացնելու գործող և նախագծում առկա տեխնիկական խնդիրները լուծելու տեսանկյունից ավելի արդյունավետ մեխանիզմ է:		նախագահը որոշում է Խորհրդի նիստի անցկացման օրը, վայրը և ժամը: Խորհրդի նիստերի անցկացման մասին անդամները ծանուցվում են նիստից առնվազն քսան օր առաջ: Խորհրդի յուրաքանչյուր անդամ Խորհրդի նիստի օրակարգում հարց ընդգրկելու համար կարող է այն ներկայացնել նիստից առնվազն տաս օր առաջ՝ այդ մասին տեղեկացնելով Նախարարության աշխատակազմին՝ կցելով անհրաժեշտ նյութերը»

		10. Առաջարկ. Հավելվածի 18-րդ կետում մեկ շաբաթ առաջ ժամկետը փոխել 20 օր առաջ ժամկետով: Հիմնավորում. Այս փոփոխությունը բխում է 16-րդ կետում առաջարկած փոփոխությունից:	Չի ընդունվել: (Նախագծի վերջնական խմբագրված տարբերակը համաձայնեցվել է «Արազա» հասարակական բարեգործական կազմակերպության հետ): Մեկ շաբաթյա ժամկետը կարծում ենք բավարար է:	Նախագծում փոփոխություն չի կատարվել:
		11. Առաջարկ. Հավելվածի 19-րդ կետում լրացնել «խորհրդի քարտուղարը/նախագահի օգնականը» բառերը: Խորհրդի աշխատանքային գործունեության կազմակերպչական-տեխնիկական ապահովումն իրականացնում են խորհրդի քարտուղարը/նախագահի օգնականը, Նախարարության աշխատակազմի հասարակության հետ կապերի համար պատասխանատու ստորաբաժանումը կամ տվյալ Նախարարության կազմակերպչական-տեխնիկական ապահովումն իրականացնող այլ պատասխանատու ստորաբաժանումը	Չի ընդունվել: (Նախագծի վերջնական խմբագրված տարբերակը համաձայնեցվել է «Արազա» հասարակական բարեգործական կազմակերպության հետ): Նախագծի հավելվածի 21-րդ կետով նախատեսվել է նիստի քարտուղար ունենալու հնարավորությունը: Վերջինս նշանակվում է նիստը նախագահողի կողմից:	Նախագծում փոփոխություն չի կատարվել:

		Հիմնավորում. Այս փոփոխությունը բխում է 3-րդ, 5-րդ կետերում առաջարկած փոփոխությունից:		
		12. Առաջարկ. Հավելվածի 26-րդ կետը լրացնել «կամ անդամների կեսից ավելի» բառերով: Հիմնավորում. Այս փոփոխությունը բխում է կողմերի համաչափ իրավասությունների ապահովման պահանջից:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
		13. Առաջարկ. Հավելվածի 27-րդ կետը լրացնել «հաստատում է խորհրդի կազմը և քարտուղարին/նախագահի օգնականին» բառերով: Հիմնավորում. Կարծում ենք սա մեխանիկական բացթողում է:	Ընդունվել է մասնակի:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
		14. Հավելվածի 28-րդ կետը լրացնել հետևյալ ենթակետերով. - հանդես գալ նիստերի օրակարգի ձևավորման հարցապնդմամբ, - մասնակցել նախարարության կողմից	Ընդունվել է ի գիտություն: Նախագծի հավելվածի 28-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն, Խորհրդի անդամն ունի Աշխատակարգից բխող այլ	Նախագծում փոփոխություն չի կատարվել:

		մշակվող՝ ռազմավարության, իրավական ակտերի և հայեցակարգերի նախագծերի մշակման աշխատանքներին, աջակցել դրանց շուրջ հանրային քննարկումների կազմակերպմանը, - մասնակցել պետական բյուջեի և միջնաժամկետ ծախսային ծրագրերի իրականացման հաշվետվությունների քննարկմանը, - ներկայացնել առաջարկություններ և դիտողություններ շրջանառվող ռազմավարական, պետական բյուջերի, միջնաժամկետ ծրագրային ծախսերի իրավական ակտերի և հայեցակարգերի նախագծերի վերաբերյալ, - մասնակցել նախարարության գերատեսչությունների և նախարարության ստորաբաժանումների և պետական բյուջեի ֆինանսավորմամբ համակարգի կազմակերպությունների կողմից մատուցվող հանրային ծառայությունների որակի և մատչելիության գնահատման մոնիթորինգի ցուցանիշների սահմանմանը և իրականացմանը - նիստերին հրավիրել այլ անձանց՝	իրավունքներ: Սա ենթադրում է, որ չի բացառվում անձին Աշխատակարգից բխող այլ իրավունքներ ընձեռելու և դրանք իրացնելու հնարավորությունը:	

		փորձագետներ և շահառուներ, եթե գտնում են, որ նրանց մասնակցությունը կնպաստի ճիշտ որոշումների ընդունմանը - ներկայացնել կարծիք՝ Խորհրդի նիստերի ընթացքում քննարկվող հարցերի շուրջ. - մասնակցել քվեարկությանը; Հիմնավորում. Այս փոփոխությունը բխում է կողմերի դերակատարության և նրանց համար համաչափ իրավասությունների ապահովման պահանջից, ինչպես նաև խորհրդի պոտենցիալ անդամների ու հասարակության համար կհստակեցնի խորհրդի անդամների դերակատարությունը:		
		15. Առաջարկ. 29-րդ կետը լրացնել հետևյալ ենթակետերով. - նիստերի օրակարգի ձևավորման հարցապնդմամբ հանդես գալու նպատակով կազմակերպել հանրային կարծիքի բացահայտման տեղեկատվահավաք, հանրային քննարկումներ, մասնավորապես ընտրողների մասնակցությամբ, անհրաժեշտության դեպքում ապահովել դրանց	Չի ընդունվել: (Նախագծի վերջնական խմբագրված տարբերակը համաձայնեցվել է «Արազա» հասարակական բարեգործական կազմակերպության հետ): Խորհրդի անդամի միակ	Նախագծում փոփոխություն չի կատարվել:

		փորձագիտական վերլուծություն և պատրաստել համապատասխան ձևակերպում նյութեր, - հավաքագրել անկախ հետազոտությունների և մոնիթորինգի հաշվետվություններ, - աջակցել նախարարության կողմից շրջանառվող ռազմավարական, պետական բյուջեի, միջնաժամկետ ծրագրային ծախսերի իրավական ակտերի և հայեցակարգերի նախագծերի շուրջ հանրային քննարկումների կազմակերպմանը, - ներկայացնել առաջարկություններ և դիտողություններ շրջանառվող ռազմավարական, պետական բյուջեի, միջնաժամկետ ծրագրային ծախսերի իրավական ակտերի և հայեցակարգերի նախագծերի վերաբերյալ, - ներգրավվել նախարարության գերատեսչությունների և նախարարության ստորաբաժանումների և պետական բյուջեի ֆինանսավորմամբ համակարգի կազմակերպությունների կողմից մատուցվող հանրային ծառայությունների որակի և մատչելիության գնահատման մոնիթորինգի ցուցանիշների սահմանման և իրականացման	պարտականությունն է Խորհրդի աշխատանքներին մասնակցելը:	

		աշխատանքներում - իրականացնել հանրային շահերի պաշտպանություն և լոբբինգ - եռամսյակը մեկ պատրաստել ու տարածել համառոտ հաղորդագրություններ խորհրդի նիստերի արդյունքների մասին: Հիմնավորում. Այս փոփոխությունը բխում է 5-րդ կետում առաջարկված փոփոխություններից, ինչի համաձայն ՔՀԿ համայնքի կողմից ընտրված ներկայացուցիչներն ընտրողների առաջ ունեն հստակ պարտավորություններ, որոնք պետք է ամրագրված լինեն փաստաթղթում:		
		16. Առաջարկ. Հավելվածի 30-րդ կետը լրացնել հետևյալ բառերով. «ընտրողների հետ ոչ արդյունավետ աշխատանքի, կամ անգործության հիմնավորմամբ, խորհրդի անդամի ընտրողների կեսից ավելիի պահանջով, խորհրդի անդամների 2/3-ի քվեարկության արդյունքների համաձայն»: Հիմնավորում.	Ընդունվել է մասնակի: Հիմքեր են նախատեսվել Խորհրդի անդամների լիազորությունների դադարեցման համար:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:

		Այս փոփոխությունը ևս բխում է 5-րդ կետում առաջարկված փոփոխություններից, ինչի համաձայն ՔՀԿ համայնքի կողմից ընտրված ներկայացուցիչը կարող է փոխվել բացառապես ընտրողների պահանջով և խորհրդի քվեարկության արդյունքների հիման վրա: Ինչը բացառում է պետական կառույցի մասնակցությունն ու ազդեցությունը խորհրդի ձևավորման ու գործունեության վրա: Որը ժողովրդավարական, մասնակցային կառավարման միջազգային փորձի նվաճումներից է:		
20	<<Գիտակցիր իրավունքդ>> իրավապաշտպան հասարակական կազմակերպություն	Եթե խորհրդի ադամն անցնում է այլ նախարարությունում,պետական կամ ՏԻՄ-ում աշխատանքի, կամ դադարեցվում է նրա անդամակցությունը կազմակերպությունում արդյո՞ք դադարեցվում են նրա լիազորությունները, եթե այո, ապա կազմակերպությունն իրավասու է իր անդամներից մեկով փոխարինե՞լ:	Ընդունվել է մասնակի:	Նախագծում առանձին կետ է ավելացվել խորհրդի անդամի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ՝ մասնավորապես այն դեպքում,երբ խորհրդի անդամը չի բավարարում առաջադրվող

				պահանջները:
		Քաղաքականության մեջ տեղի ունեցող փոփոխություններ և /կամ/ նախարարի հրաժարականի դեպքում նոր խորհրդի նախագահն արդյո՞ք իրավասու է ձևավորել խորհուրդը նոր կազմ: Ցանկալի է ,որ նման իրավասություն չունենա և դրանով իսկ ապահովելով խորհրդի անկախությունը:	Երկու տարին մեկ անգամ Խորհրդի անդամների մեկ երրորդը ենթարկվում է ռոտացիայի՝ ըստ վիճակահանության: Այսինքն, Խորհրդի անդամների փոփոխությունը կարող է կատարվել միայն ռոտացիոն կարգով, և խորհրդի նոր նախագահի առկայությունը խորհրդի կազմը փոփոխելու հիմք չէ:	Նախագծում փոփոխություն չի կատարվել:
21	Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմ	1. Նախագծի հավելվածի 4-րդ կետով սահմանվում է, որ խորհրդի կազմում կարող են ընդգրկվել ՀԿ-ների, ՋԼՄ-ների ներկայացուցիչներ, ինչպես նաև այլ շահագրգիռ անձինք, որոնց գործունեության բնույթը «համընկնում է նախարարության գործունեության հիմնական ուղղություններին, համապատասխան ոլորտում ունեն մասնագիտական փորձառություն և ձեռքբերումներ»:	Ընդունվել է:	Նախագծի հավելվածի 4-րդ կետը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «4. Խորհրդի կազմում կարող են ընդգրկվել հասարակական կազմակերպությունների, զանգվածային

		Նշված ընդհանրական ձևակերպումը տարածական մեկնաբանության տեղիք կարող է տալ: Մասնավորապես, պարզ չէ, թե որոնք են այն չափանիշները, որոնք հնարավորություն կտան որոշելու համապատասխան ոլորտում մասնագիտական փորձառության և ձեռքբերումների առկայությունը կամ բացակայությունը և դրանց մակարդակը: Հարկ է նկատել, որ ՀՀ կառավարության 2014թ, հուլիսի 31-ի նիստի թիվ 32 արձանագրային որոշմամբ հաստատված «Բաց կառավարման գործընկերություն» Հայաստանի Հանրապետության երկրորդ գործողությունների ծրագրի» 2-րդ բաժնի 7-րդ կետով նշված է, որ պետք է սահմանվեն «.... ՔՀԿ-ների ներկայացուցչականության և մասնագիտական որակավորման չափորոշիչները», որոնք, ըստ էության, նախագծում իրենց արտացոլումը չեն ստացել:		լրատվության միջոցների ներկայացուցիչներ, ինչպես նաև այլ շահագրգիռ անձինք, որոնց գործունեության բնույթը համընկնում է Նախարարության գործունեության հիմնական ուղղություններին, համապատասխան ոլորտում ունեն 2 տարվա մասնագիտական փորձառություն (համագործակցել են միջազգային կազմակերպությունների հետ, իրականացրել կամ մասնակցել են ոլորտին առնչվող ծրագրերի,

				փորձագիտական աշխատանքների իրականացմանը, ունեն ոլորտին առնչվող հրապարակումներ, մասնակցել են նախարարության կողմից ձևավորված աշխատանքային խմբերի, հանձնաժողովների աշխատանքներին և այլն) և ձեռքբերումներ և որոնց մասնակցությունը Խորհրդի աշխատանքներին կարող է նպաստել Խորհրդի առջև դրված խնդիրների և նպատակների առավել արդյունավետ իրականացմանը:

				Խորհրդի կազմում ընդգրկվող անձը պետք է ունենա առնվազն բակալավրի որակավորում: Խորհրդի կազմում չեն կարող ընդգրկվել այն անձինք, ովքեր տվյալ պահին ֆինանսավորում են ստանում Նախարարությունից: Խորհդրի կազմում խրախուսվում է փոքրամասնությունն ների ներկայացուցիչների ներգրավվածությունը »:
		2. Հավելվածի 7-րդ կետի համաձայն՝ երկու տարին մեկ անգամ խորհրդի անդամների մեկ երրորդը ենթարկվում է ռոտացիայի՝ ըստ վիճակահանության: Նշվածից հետևում է, որ խորհրդի սկզբնական կազմի այն անդամները, ովքեր երկամյա ժամկետի	Ընդունվել է:	Նախագծի 6-րդ կետը, որով սահմանվում է, որ խորհրդի անդամները ընդգրկվում են խորհրդի կազմում

		ավարտից հետո չեն ենթարկվի ռոտացիայի, կշարունակեն իրենց անդամությունը խորհրդում: Մինչդեռ հավելվածի 6-րդ կետը սահմանում է, որ խորհրդի անդամները ընդգրկվում են խորհրդի կազմում երկու տարի ժամկետով: Իսկ 30-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ խորհրդի անդամի լիազորությունները դադարեցվում են լիազորությունների ժամկետը լրանալու դեպքում: Վերոգրյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է հավելվածի վերը հիշատակված դրույթները շարադրել այնպես, որպեսզի բացառվի տարբեր կետերի միջև ներքին հակասությունը:		երկու տարի ժամկետով, հանվել է:
		3. Հավելվածի 28-րդ կետի 5-րդ ենթակետում օգտագործվող «աշխատակարգից բխող այլ իրավունքներ» ձևակերպումը խնդրահարույց է: Հարկ է նշել, որ իրավական հստակության տեսանկյունից որևէ իրավունքի ամրագրման հանգամանքը պետք է պարզ լինի դրա հասցեատերերի համար և հնարավորություն տա նրանց՝ դրսևորելու դրան համահունչ վարքագիծ:	Ընդունվել է:	Նախագծի հավելվածի 28-րդ կետի 5-րդ ենթակետը հանվել է:

		Մինչդեռ նախագծով առաջարկվող ձևակերպման դեպքում խորհրդի ցանկացած անդամ աշխատակարգի յուրովի մեկնաբանման արդյունքում կարող է ինքն իրեն վերապահել տարաբնույթ իրավունքներ:		
		4. Վերոգրյալից զատ, հարկ է նկատել, որ ՀՀ կառավարության 2014 թ. հուլիսի 31-ի նիստի թիվ 32 արձանագրային որոշմամբ հաստատված «Բաց կառավարման գործընկերություն» Հայաստանի Հանրապետության երկրորդ գործողությունների ծրագրի» պահանջները լիարժեք կերպով իրացված չեն Նախագծում: Այսպես, հիշյալ ծրագրի 2-րդ բաժնի 7-րդ կետով նախատեսված է «... կառավարության և նախարարությունների պաշտոնական կայքերում էլեկտրոնային հաշվետվետվողական համակարգի ներդրում՝ հանրային առաջարկները և դրանց վերաբերյալ պաշտոնական մեկնաբանությունները, մասնակցային խորհրդատվական մարմինների գործունեության տարեկան հաշվետվությունը թափանցիկ և հասանելի դարձնելու համար»: Նախագծում, սակայն, համապատասխան	Ընդունվել է:	Նախագծում ավելացվել է 31-րդ կետը հետևյալ բովանդակությամբ. «31. Խորհրդի գործունեության տարեկան հաշվետվությունը տեղադրվում է Նախարարության պաշտոնական կայքէջում:» Խորհրդի նիստի արձանագրության բովանդակությանը վերաբերող 21-րդ կետում ավելացվել է 5-րդ ենթակետ հետևյալ

		կանոնակարգումներ ամրագրված չեն: Առկա են միայն խորհրդի նիստի արձանագրությունները և ընդունված որոշումները նախարարության պաշտոնական կայքէջում տեղադրելու պահանջ սահմանող դրույթներ:		բովանդակությամբ «նիստին մասնակցող խորհրդի անդամների ներկայացրած հանրային առաջարկները և դրանց վերաբերյալ պաշտոնական մեկնաբանությունները.»
22	Սոցիալական աշխատողների ասոցիացիա	1. Ինչով է տարբերվում Հանրային խորհուրդը համապատասխան հանձնաժողովից, ինչը առանձնապես էֆեկտիվ չէ 2. Ինչպես են առանձնացվում գործառույթները կոլեգիայի գործառույթներից, կա նկարագրությունը 3. ՔՀԿ-ների ներկայացուցչականության և մասնագիտական որակավորման չափորոշիչներն անբավարար են:	1. Ընդունվել է ի գիտություն: 2. Ընդունվել է ի գիտություն: 3. Չի ընդունվել (Նախագծում հստակ նախատեսվել են այն չափանիշները, որոնց համապատասխանելու դեպքում անձը կարող է ներգրավել նախարարին կից հանրային խորհրդում)	1. Նախագծին կից ներկայացված հիմնավորման մեջ հստակ ներկայացվել են խորհուրդների և կոլեգիաների միջև առկա տարբերությունը, դրանց առանձնահատկությունները, գործունեության և կազմավորման կարգը:

				2. Նախագծին կից ներկայացված հիմնավորման մեջ մանրամասն ներկայացվել են նաև կոլեգիաների գործառույթները:
23	«Կովկաս» հասարա-կագիտական հետազոտություն ների կենտրոն	1. Պարզ չէ, թե ինչու՞ է նախարարին կից կոլեգիան կոչվում Հանրային խորհուրդ, երբ այդ պաշտոնական անվանումը կրող մարմին 2009թ-ից արդեն իսկ գործում է ՀՀ Նախագահին կից: մանավանդ, օրենքը պահանջում է, որ կազմակերպությունների անվանումները չպետք է լինեն շփոթելու աստիճանի նման: 2. Բավարար հստակեցված չէ կոլեգիաների և խորհուրդների աշխատակարգը և դրանց առանձնահատկությունները: Բավարար պարզ ու հստակ կանոնակարգված չէ խորհրդում ՔՀԿ-ների ներգրավման գործընթացը. արարողակարգը	1. Չի ընդունվել: Նախարարին կից կոլեգիան այլ մարմին է, իսկ հանրային խորհուրդը իր բնույթով այլ խորհրդակցական մարմին է: Այն առնչություն չունի ՀՀ Նախագահին կից խորհրդի հետ, քանի որ ստեղծվելու է նախարարներին կից իր բնույթով լինելով խորհրդակցական մարմին: 2. Ընդունվել է ի գիտություն:	2. Նախագծին կից ներկայացված հիմնավորման մեջ հստակ ներկայացվել են խորհուրդների և կոլեգիաների միջև առկա

				տարբերությունը, իսկ խորհրդի անդամների ներգրավման ընթացակարգը մանրամասն ներկայացվել է Նախագծում:
24	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն	. 4-րդ կետից հասկանալի չէ, թե ՀԿ-ների ներկայացուցիչներին վերաբերում է "որոնք" բառից հետո շարադրված պայմանները: Հասկանալի չէ նաև 4-րդ կետի վերջին նախադասության իմաստն ու անհրաժեշտությունը, 2. 5-րդ կետից հասկանալի չէ , թե՝ a) դիմումները ինչ ձևով (թղթային , էլեկտրոնային) պետք է ներկայացվեն, b) ինչ ժամկետներում: c) նշված չէ նաև թե ինչ որոշում է կայացնում նախարարը, եթե "ընդունելի" դիմումների քանակը ավելին է նախատեսված քանակից, կամ պակաս d) պարզ չէ նաև այն դեպքը, երբ մերժված դիմումի հասցեատերը համաձայն չէ մերժման հետ: A. Խորհրդի անդամների ռոտացիայի	1. Ընդունվել է: 2. Ընդունվել է մասնակի:	1. Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: 2. Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: 3. Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:

		կարգը՝ վիճակահանություն, արդարացի չէ՝ կարող է դրա արդյունքում "մշտական" անդամների խավ ստեղծվել: B. Պարզ չէ նաև, դրա արդյունքում դուրս մնացածները երբ կկարողանան նորից դիմում ներկայացնել: 3. 16-րդ կետում հստակ պետք է նշվի օրակարգի պարտադիր այն հարցերը, որոնք բխում են որոշման 1-ին կետով հաստատված լրացումից: Պետք է նշվի նաև, որ դրանց նյութերը մշտապես են տրամադրվում անդամներին, բացի այդ խորհրդի անդամը պետք է օրակարգում առաջարկություն անելու իրավունք ունենա ցանկացած ժամանակ՝ առաջիկա նիստում դրանց ընդգրկվելու ակընկալիքով: Բացված չէ նաև արտահերթ նիստի ժամկետները, պատասխանատուները, չհրավիրման հետևանքները:	3. Ընդունվել է մասնակի:	
25	Պետական կառույցների հետ համագործակցության «Հանրային ցանց»	1. Հարկ է հիմնավորման մեջ հստակ շեշտադրել կոլեգիաների և խորհուրդների միջև տարբերությունը ինչպես կազմի, այնպես էլ քննարկվող հարցերի բնույթի և մասնակցության ձևաչափի առումով: (հոդ. 15.1; 15.2 կետեր և հավելվածի 4-րդ կետ):	1. Ընդունվել է:	1. Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:

		2. Գտնում ենք, որ խորհրդի կազմում ընդգրկվելու համար կազմակերպությունների և անհատների համար առանձնացված մոտեցում և պահանջներ պետք է սահմանվեն: Կազմակերպություն ներկայացնողի մասնագիտական փորձառությունը և ձեռքբերումները երաշխավորելու նպատակով Խորհրդի կազմում պետք է ընդգրկվի մասնագիտացված կազմակերպությունը և իրավունք ունենա յուրաքանչյուր նիստի օրակարգից ելնելով ներկայանալ կազմակերպության անունից լիազորված փորձագետ անձի միջոցով:	2. Ընդունվել է մասնակի:	2.Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
		3. Նախագծում չի տրված խորհրդի կազմը ձևավորելու մրցույթին դիմորդների ներքևի շեմը չբավարարելու և վերին շեմը գերազանցելու դեպքերի լուծումը: Այս դեպքերից առաջինի դեպքում կարծում ենք կարելի է սահմանել, որ յուրաքանչյուր նիստին կանոնակարգով սահմանված կարգով կարող են հրավիրվել անհրաժեշտ թվաքանակով նիստի օրակարգում քննարկվող թեմաներին քաջատեղյակ	3. Ընդունվել է մասնակի:	3.Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:

		անկախ փորձագետներ և կազմակերպությունների ներկայացուցիչներ: Երկրորդ դեպքում՝ կարծում ենք, որ Հավելված II-ի 4-րդ կետից կարելի է հանել վերջին նախադասությունը. «Խորհրդի կազմում խրախուսվում է ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների ներգրավվածությունը»: Այս, ինչպես նաև լոբբիստական գործունեություն իրականացնող կազմակերպություններին նախապատվություն տալու միջոցով կարելի է լուծել վերին շեմը գերազանցելու դեպքում հավասար կարողություններ ունեցող կազմակերպությունների ընտրության կարգավորման խնդիրը: Նախագծում չի տրված արդեն գործող խորհուրդների կազմի վերակազմավորման կամ վերահաստատման ընթացակարգը: Դատելով այն հանգամանքից, որ նախարարությունն այս հարցի առընչությամբ մերժել է կանոնակարգում բացառություն կատարելու մի շարք նախարարությունների կողմից ներկայացված առաջարկները, կարելի է ենթադրել, որ նախատեսվում է սահմանել	4. Ընդունվել է ի գիտություն: Նախագծում նախատեսված է դրույթ այն մասին, որ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝երկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը ներկայացնել նախարարության կանոնադրությունում համապատասխան լրացում	

		անցումային դրույթ: Ինչն առայժամ տեսանելի չէ նախագծում: Գտնում ենք, Արդարադատության նախարարության դիքորոշումն առ այն, որ կանոնակարգը հավասարապես պետք է տարածվի բոլոր նախարարությունների վրա միանգամայն արդարացված է և ենթադրում է դրանց վերաձևավորում բնավ չբացառելով գործող խորհրդի նույն կազմի վերընտրությունը, ապահովելով աշխատակարգով սահմանված ընթացակարգի կիրառկումը:	կատարելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ. 2) Նախարարության կանոնադրության մեջ լրացում կատարելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 30-օրյա ժամկետում ստեղծել Հայաստանի Հանրապետության նախարարին կից հանրային խորհուրդ:	